§46. Գլխուղեղի կառուցվածքը և գործառույթները

Նշե՛ք թվարկված **ո՞ր գործընթացը գլխուղեղի ո՛ր բաժինն է կարգավորում**, և տեղադրում լրացրե՛ք աղյուսակը:

N	Գլխուղեղի բաժին	Գործընթացներ
1.	Երկարավուն ուղեղ	
2.	Կամուրջ	
3.	Ուղեղիկ	
4.	Միջին ուղեղ	
5.	Միջանկյալ ուղեղ	
6.	Մեծ կիսագնդեր	

Գործընթացներ.

I. Դիմախաղի մկանների աշխատանքի և գլխի դիմային հատվածի գեղձերի հյութազատության կարգավորում
II. Փսխման, հազի, արցունքազատման գործընթացների իրականացում
III. Բոլոր զգայարանների աշխատանքների ենթակեղևային ղեկավար- ման իրականացում
IV. Մարսողության, շնչառության և սիրտ-անոթային համակարգերի աշ- խատանքների կարգավորում
V. Օրգանիզմի հոմեոստազի կարգավորում
VI. Օրգանիզմի ջերմակարգավորման իրականացում
VII. Կմախքի մկանների լարվածության պահպանում
VIII. Վեգետատիվ նյարդային համակարգի աշխատանքի կարգավորում
IX. Շարժումների հավասարակշռման իրականացում
X. Ձայնի և լույսի նկատմամբ կողմնորոշման ռեֆլեքսների իրագործում
XI. Օրգանիզմի բազմատեսակ գործառույթների իրագործում, ընդհան- րացում, վարքագծի ձևավորում
XII. Մտածողության, գիտակցության և այլ հոգեկան գործունեության իրականացում: